ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հունիսի 24-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի հերթական նստաշրջանը՝ նվիրված հայ միջնադարյան կերպարվեստի պատմությանը։

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Ռ. Զարյանը։ Նա ընդգծեց, որ ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների առանցքային ճյուղերից է հայկական միջնադարյան արվեստի ուսումնասիրությունը և այդ բնագավառում արվեստի ինստիտուտը վերջին տարիներին պատրաստել է համապատասխան մասնագետներ, լրացնելով կադրերի պակասը։

Այնուհետև, «Հայ կերպարվեստի ներդրումը համաշխարհային արվեստի գանձարանում» թեմայով զեկուցում կարդաց արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամբյանը։ Հայ մշակույթի բազմադարյան պատմության մեջ ճարտարապետության և գրականության հետ միասին,— նշեց զեկուցողը,— ղգալի տեղ է գրավում նաև գեղանկարչությունը։ Նա կանգ առավ ինչպես միջնադարյան, այնպես էլ նոր և սովետական շրջանների հայ արվեստի այնպիսի խոշոր երևույթների վրա, որոնք իրենց որոշակի տեղն ունեն համաշխարհային արվեստի պատմության մեջ։ Ապա հանգամանորեն խոսեց հայ միջնադարյան մանրանկարչության մասին և ցույց տվեց, որ այն որոշակի արժեք է ներկայացնում միջնադարյան արվեստի պատմության համար ընդհանրապես։

«Հայկական միջնադարյան խճանկարը» թեմայով հանդես եկավ արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մ. Մաղմանյանը։ Հայկական խճանկարի մասին արված պատմական համառոտ ակնարկներից հետո, զեկուցողը ցուցադրեց Երուսաղեմի վաղ միջնադարին վերաբերող հայկական խճանկարների գունավոր պատկերները, որոնք դիտվեցին մեծ հետաքրքրությամբ։

Հետաքրքրությամբ լսվեց նաև ճարտարապետության դոկտոր Սա. Մնացականյանի «Պահպանիչ խորհրդանիշերը միջնադարյան հայ քանդակագործության մեջ» հաղորդումը։ Միջնադարյան պահպանիչ խորհրդանշանների ակունքները գալիս են հնագույն ժողովրդական հավատալիքներից և հանդես են գալիս կենդանիների կերպարներով, տեղադրվում են մուտքերի ու լուսամուտների մոտ։ Այդպիսի խորհրդանիշեր առկա են դեռ ուրարտական արվեստում (Մուսասիրի տաճարը), իսկ վաղ միջնադարյան Հայաստանում հանդես են գալիս IV դարի Աղցի Արշակունիների դամբարանի մուտքի երկու կողմերում։ Զեկուցողը օրինակներ բերեց VII և IX դարերի հուշարձաններից, որոնք առավել ցայտուն դրսևորվել են Ախթամարում։ Դրանք պահպանվել են նաև Գանձասարում (XIII—XIV դդ.)։ Զանազան կենդանակերպ պահպանիչ խորհրդանիշեր հանդես են գալիս ընդհուպ մինչև XVII դարը (Էջմիածնի տաճարը և այլն)։

Հաջորդ «Դանիելի պատկերագրությունը հայ քանդակագործության մեջ» թեմայով հանդես եկող արվեստագիտության թեկնածու Լ. Աղարյանը նշեց, որ պատկերագրական վերլուծությունների ժամանակ, սովորաբար, առաջնորդվել են արտաքին ձևերի համադրություններով։ Մինչդեռ պատկերագրությունը ընդհանրապես կոնկրետ իրականության հետ առնչվող ու որոշակի մտածելակերպի արգասիք է։ Ապա, հիմք ընդունելով, որ միջնադարյան պատկերագրությունը, պատմական տարբեր էտապներում, արտացոլել է տեղական-ժողովրդական մտածելակերպը, զեկուցողը քննության առավ վաղ միջնադարին վերաբերող հայկական հուշարձանների վրա առկա Դանիել Մարգարեին պատկերող թեման։ Հատկապես կանգ առնելով Աղցի Արշակունիների դամբարանի քանդակի վրա, նա այն կարծիքը հայտնեց, որ բիբլիական թեման, որը սովորաբար արտաբերվել է կրոնադավանաբանական իմաստով, տվյալ դեպքում ներառել է նաև հասարակական-պատմական իրադրությունների հետ կապված գաղափարներ։ Զեկուցողը նշեց նաև, որ կրոնա-ասկետական պատկերացումներից բխող հասկացությունները ներկայացված քանդակներում համակցվում են հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ։

«Աստվածամոր կերպարը XVII—XVIII դդ. հայ կերպարվեստում» թեմայով հանդես եկավ արվեստագիտության դոկտոր Մ. Ղաղարյանը։ Հայ արվեստի պատմության այս համեմատաբար պակաս ուսումնասիրված շրջանի վերաբերյալ զեկուցողի հավաքած հսկայական նյութը,

դասակարգումն ու առանձին աշխատանքների մեկնաբանությունը նրանների կողմից ընկալվեց մեծ հետաքրքրությամբ։

Նկարչության մեջ Աստվածամոր կերպարը մեծավորվեց երկրորդ դարի կեսերին,— նշում է դեկուցողը։— Հայաստանն այն երկիրն է, որտեղ, բան Մովսես Խորենացու, Աստվածամոր դիմանկարը եղել է յատ ավելի առաջ։

Աստվածամոր մի քանի տասնյակի հասնող պատկերները, որոնք պահպանվել են ինչպես Հայաստանում, նույնպես և դանդան գաղթօջախներում, կատարել են պրոֆեսիոնալ նկարիչները և ժողովրդական վարպետները։ Հովնաթանյանները (Էջմիածին), Բոգուշները (Լվով), Հովհաննես Մրքուզը, Մինասը (Նոր Ջուղա), Մանասները (Պոլիս), Հովհաննես Նկարիչները (Երուսաղեմ. Կաիրե) մի կողմից ընկալում էին Եվրոպայից եկող գեղարվեստական հասկացողությունները, հենվում ժողովրդական արվեստի ավանդների վրա և ստեղծում այն ինքնատիպը, որը բնորոշ էր միջնադարից նոր շրջանին փոխանցվող XVII—XVIII դարերի արվեստին։ Մյուս կողմից, արհեստավորական արվեստանոցներում խմբավորված ժողովրդական վարպետների աշխատանքները դրսևորում են կոմպոզիցիաների պարզությամբ, ձևերի հարթապատկերային լուծումներով, ուրվագծերի գրաֆիկական հստակությամբ։

Երկրորդ հարցը, որի վրա կանգ առավ զեկուցողը, դա Ղպտի և Մելքիթ եկեղեցիների համար կատարված Հանա Երուսաղեմցու ստեղծած Աստվածամոր դիմանկարներն էին։